Այս նվիրական օրը մեր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնություն, որպեսզի մայրերը եւ իրենց զավակները միշտ լինեն Աստծո շնորհի ներքո, որպեսզի աշխարհ եկող մանուկները մեծանան խնամքի ու հոգածության մեջ, սնուցվեն ու կրթվեն հավատքով եւ բարի զավակներ դառնան իրենց ծնողների, մեր երկրի ու ազգի համար: Աղոթում ենք առ Աստված, որ մայրության շնորհը ստացած կանայք երջանիկ եւ խաղաղ սրտով գրկեն իրենց նորածին մանուկներին, եւ բոլոր տիկնայք ու օրիորդներ Աստվածամոր օրինակով ապրեն բարեպաշտ ու առաքինազարդ կյանքով, բարօրության ու երջանկության մեջ:

Աղոթք ենք բարձրացնում, որ Տերը խաղաղ պահի մեր Հայրենիքն ու ժողովրդին եւ պահպանի հավատքով զորացյալ, բարի ու արդար գործերի մեջ հաստատուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսրայելի Պետության Կնեսետի անդամ, Իսրայելի գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման նախարար տիկին Օրիթ Նոկեդի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի:

Հանդիպման սկզբում ՀՀ գյուղատնտեսության նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց այցի նպատակները եւ նախարարությունների միջեւ հետագա համագործակցության առնչությամբ ձեռք բերված պայմանավորվածությունները:

Այնուհետեւ, ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների միջպետական հարաբերությունները սկսում են զարգանալ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ հայ համայնքի եւ Երուսաղեմի Հայոց պատրիարքության կարեւոր ներկայությունը Իսրայելում եւս դրական ներգործություն կունենա երկու երկրների համագործակցության ամրապնդման գործում:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ հայ եւ հրեա ժողովուրդների բազում ընդհանրություններին: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը կարեւոր նկատեց, որ ցեղասպանություն ապրած երկու ժողովուրդներն առավել զորացնեն իրենց կապերն ու համագործակցությունը՝ համատեղ պայքարելու, որպեսզի նման ոճիրները բացառվեն եւ այլեւս տեղ չգտնեն մարդկության կյանքում:

Իր հերթին տիկին Օրիթ Նոկեդը ներկայացրեց այցի վերաբերյալ իր տպավորությունները:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Երուսաղեմ կապարած հովվապետական իր այցերին, Հայ Եկեղեցու միջկրոնական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովին՝ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ծավարշ Քոչարյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու երկրների համագործակցությունը տարբեր ոլորտներում բարձր մակարդակի վրա է գտնվում, ինչին նպաստում են նաեւ պետական մակարդակով փոխայցելությունները: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերություններն ապագայում առավել կզարգանան ու կսերտանան:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ի դեմս նախարարի իր շնորհակալությունը հայտնեց Բելառուսի իշխանություններին բելառուսահայ համայնքի հանդեպ դրսեւորվող ջերմ վերաբերմունքի եւ հոգատարության համար:

Բելառուսի արտաքին գործերի նախարար Սերգեյ Մարտինովն իր հերթին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար: Եւս մեկ անգամ հաստատելով երկու երկրների միջեւ սերտ համագործակցության եւ ջերմ հարաբերությունների առկայությունը՝ նախարարն ընդգծեց, որ երկու ժողովուրդները կրողն են հեռավոր անցյալից եկող միեւնույն արժեքների:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը, ինչպես նաեւ քննարկվեց Մինսկում կառուցվելիք հայկական եկեղեցու համար անհրաժեշտ հողատարածք հատկացնելու հարցը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ